

չահի...» (Յիշատ. 20) : Իսկ երկրորդը խաչքարի մը պատուանդանին, դարձեալ Յովհաննավանք, կ'ըսէ. «Ես, Մայիքա. աղախին Գրիստոսի եւ սնցնող աստուածասիրին Սորիշահի...» (Յիշատ. 23) :

Ա Ս Լ Ա Ն Բ Է Կ

Մարծպան Բ-ի որդին է : Իրմէ ունինք արձանագրութիւն մը Բարձրաքաչի վանքը, ուր կը յիշէ նաեւ իր կինը Մըլքան. «Թուին ՈՂԴ (1245)... եւ Ասլանբէկ որդի Մարծպանա շինեցի զի (2). մատուռս զԱ. (1). յանուն Մըլքանա ամուսնո իմոյ եւ տուի ... մեծածախ աւետարան սուրբ եւ մարդարտով եւ ակամբք պատուականաւ զարդարած» (Յիշատ. 25) :

Ասլան բէկ կարգ մը շինարարութեանց մէջ մասնակցած է իր եղբոր՝ Գրիգորին : Բարձրաքաչի ժամատան ինկած երեք քարերու վրայ կը կարդացուի. «(Գր)իգորս եւ Ասլանպեկս որդոց Մարծպ(ա)նա յառաջնորդ...» (Էջմիածին, 1951, Նոյ.-Դեկտ. էջ 44) : Դժբախտաբար յիշատակարանին մնացեալ մասը կը պակսի :

Ասլան բէկ կը յիշուի նաեւ 1246ին Բարձրաքաչի վանքին արձանագրութեան մէջ սապէս. «Ի թուին ՈՂԵ (1246) եւ որդի Գաւկային յիմ տապանատանէն ի դուրս եկի ի Սանահնէն եւ միարանեցա Բարձրաքաչիս կամակցութեամբ Գրիգորո եւ Ասլանպեկս որդոց Մարծպանա : Եւ ըստ կարի աւանդի շինութեան տանս...» (Յիշատ. 26) : Հոս յիշուած Գաւկա հաւանաբար սրբազրուի Գաղա, որ ինչպէս տեսանք, հօրը անունը անձանոթ՝ սակայն կը յիշուի «Թոռն Համապասպեանց» ըլլալը (Յիշատ. 10) : Գաւկայ որդին որ այս արձանագրութիւնը գրել տուած է, իր անունը չի տար, կամ արձանագրութեան վրայ չէ կարդացուած : Հետաքրքրական է որ արդէն Սանահնէն տապանատուն (գերեզմանատեղի) ունենալէ վերջ Գաւկայ որդին համոզուելով կամ ստիպուելով Գրիգորէ եւ անոր եղբայր Ասլան բէկէ իր գերեզմանատեղին կը փոխադրէ Բարձրաքաչ, վանքին կտակելով իր ունեցածը :

Անթուական սակայն աւելի հին արձանագրութեան մը մէջ ի Գոշայ վանք Ս. Աստուածածին կը կարդանք. «Ես Մարզպան իշխան եւ որդիք իմ Ասլան բէկ եւ Գրիգոր միարանեցաք սուրբ Աստուածածնիս...» (Յիշատ. 16) : Չեմ գիտեր թէ ի՞նչ է սա աղաւաղեալ արձանագրութիւնը զարձեալ Գոշայ վանք, ուր կ'ըսուի. «... ի տաւնի Սարգսայ առին(?) ի ս(ուր)բ խորանի մարդին(?) պատարագ Ասլանափային(?), իսկ խափանողքն դատին յԱստուծոյ, ամէն» (Ազգ. Հանդէս, գիրք Ժ, էջ 25) : Հարցական նշանները արձանագրութիւնը կարդացողէն են : Հոս Ասլանափային գուցէ սրբազրեք Ասլան բէկին : Կիրակոս Գանձակեցի երկու առթիւ կարճ ի կարճոյ յանուանէ կը յիշէ Ասլան բէկ (Մեղիք-Օհանջանեան, էջ 273 եւ 365) :

Դժբախտաբար ուրիշ մանրամասնութիւններ կը պակսին Ասլան բէկի եւ իր կնոջ Արուս խաթունի մասին : Չենք գիտեր թէ զուակ ունեցած են :

Գ Ր Ի Գ Ո Ր Բ

Որդին է Մարզպան Բ-ի եւ եղբայրը Ասլան բէկի : 1279էն խաչքարի մը վրայ կը յիշէ իր կնոջ անունը. «Տ(է)ր ա(ստուա)ծ ողորմի պարոն Գրիգորո եւ հաւր եւ մաւր Մամիկոնի» : Իսկ Աղբիլիսա նախկին թրքական գիւղին փոքրիկ եկեղեցւոյն մէջ կայ սա արձանագրութիւնը. «Ես Գրիգոր եւ ամուս(ի)ն իմ Մամբան մեր գրամով շինեցաք ձիթահանք եւ ... տվաք ա(ստուա)»